

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ
ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ՖԱԿՈՒԼՏԵՏ

ЕРЕВАНСКИЙ ГОСУДАРСТВЕННЫЙ УНИВЕРСИТЕТ
ИСТОРИЧЕСКИЙ ФАКУЛЬТЕТ

YEREVAN STATE UNIVERSITY
FACULTY OF HISTORY

ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ

ԵՎ

ՄՇԱԿՈՒՅԹ

ՀԱՅԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՆԴԵՍ

ИСТОРИЯ И КУЛЬТУРА
АРМЕНОВЕДЧЕСКИЙ ЖУРНАЛ

HISTORY AND CULTURE
JOURNAL OF ARMENIAN STUDIES

№ 2

ԵՐԵՎԱՆ - ԵՐԵՎԱՆ - YEREVAN
ԵՊՀ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ, ИЗДАТЕЛЬСТВО ЕГУ, YSU PRESS
2019

*Հրատարակվում է Երևանի պետական համալսարանի
Պատմության ֆակուլտետի գիտական խորհրդի որոշմամբ*

Նախագահ (գլխավոր խմբագիր)՝ պատմ. գիտ. դոկտ., պրոֆ. **Էդիկ Մինասյան**
Խմբագրական խորհուրդ՝

Արամ Մինոնյան (ԵՊՀ Հայագիտական հետազոտությունների ինստիտուտի տնօրեն, ՀՀ ԳԱԱ թղթ. անդամ, պատմ. գիտ. դոկտ., պրոֆ.), **Աշոտ Մելքոնյան** (ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս, պատմ. գիտ. դոկտ., պրոֆ.), **Արտակ Մովսիսյան** (պատմ. գիտ. դոկտ., պրոֆեսոր), **Ալբերտ Ստեփանյան** (պատմ. գիտ. դոկտ., պրոֆ.), **Հայկ Ավետիսյան** (պատմ. գիտ. դոկտ., պրոֆ.), **Հայրապետ Մարգարյան** (պատմ. գիտ. դոկտ., պրոֆ.), **Լևոն Չուգասյան** (արվեստագիտ. դոկտ., պրոֆ.), **Հանլետ Պետրոսյան** (պատմ. գիտ. դոկտ., պրոֆ.), **Արման Եղիազարյան** (պատմ. գիտ. դոկտ., դոց.), **Իգիթ Ղարիբյան** (պատմ. գիտ. դոկտ., պրոֆ.), **Հենրիկ Աբրահամյան** (պատմ. գիտ. դոկտ., պրոֆ.), **Հայկազ Հովհաննիսյան** (պատմ. գիտ. դոկտ., պրոֆ.), **Աշոտ Ներսիսյան** (պատմ. գիտ. դոկտ., պրոֆ.), **Աշոտ Հայրունի** (պատմ. գիտ. դոկտ., պրոֆ.), **Վալերի Թունյան** (պատմ. գիտ. դոկտ., պրոֆ.), **Վանիկ Վիրաբյան** (պատմ. գիտ. դոկտ., պրոֆ.), **Ռաֆիկ Նահապետյան** (պատմ. գիտ. դոկտ., պրոֆ.), **Հակոբ Հարությունյան** (պատմ. գիտ. դոկտ., դոց.), **Հովիկ Գրիգորյան** (պատմ. գիտ. թեկն., դոց.), **Մխիթար Գաբրիելյան** (պատմ. գիտ. թեկն., դոց.), **Էդգար Հովհաննիսյան** (պատմ. գիտ. թեկն., դոց.):

Председатель (главный редактор) - докт. ист. наук, проф. **Эдик Минасян**
Редакционная коллегия:

Արամ Սիմոնյան (директор Института Арменоведческих исследований ЕГУ, членкор. АН РА, докт. ист. наук, проф.), **Ашот Мелконян** (академик АН РА, докт. ист. наук, проф.), **Артակ Мовсисян** (докт. ист. наук, проф.), **Альберт Степанян** (докт. ист. наук, проф.), **Айк Аветисян** (докт. ист. наук, проф.), **Айрапет Маргарян** (докт. ист. наук, проф.), **Левон Чугасзян** (докт. искусствовед. наук, проф.), **Гамлет Петросян** (докт. ист. наук, проф.), **Арман Егиазарян** (докт. ист. наук, доц.), **Игит Гарибян** (докт. ист. наук, проф.), **Генрих Абраамян** (докт. ист. наук, проф.), **Айказ Оганесян** (докт. ист. наук, проф.), **Ашот Нерсисян** (докт. ист. наук, проф.), **Ашот Айруни** (докт. ист. наук, проф.), **Валерий Тунян** (докт. ист. наук, проф.), **Ваник Виравян** (докт. ист. наук, проф.), **Рафик Наапетян** (докт. ист. наук, проф.), **Акоб Арутюнян** (докт. ист. наук, доц.), **Овик Григорян** (канд. ист. наук, доц.), **Мхитар Габриелян** (канд. ист. наук, доц.), **Эдгар Оганнисян** (канд. ист. наук, доц.).

Chairman (Editor-in-Chief) - Doctor of Sciences, prof. **Edik Minasyan**
Editorial Board:

Aram Simonyan (Director of YSU Institute for Armenian Studies, Corresp. member of NAS RA, Doctor of Sciences, prof.), **Ashot Melkonyan** (Academician of NAS RA, Doctor of Sciences, prof.), **Artak Movsisyan** (Doctor of Sciences, prof.), **Albert Stepanyan** (Doctor of Sciences, prof.), **Hayk Avetisyan** (Doctor of Sciences, prof.), **Hairapet Margaryan** (Doctor of Sciences, prof.), **Levon Chugaszyan** (Doctor of Arts, prof.), **Hamlet Petrosyan** (Doctor of Sciences, prof.), **Arman Yeghiazaryan** (Doctor of Sciences), **Igit Gharibyan** (Doctor of Sciences, prof.), **Henrik Abrahamyan** (Doctor of Sciences, prof.), **Haikaz Hovhannisyanyan** (Doctor of Sciences, prof.), **Ashot Nersisyan** (Doctor of Sciences, prof.), **Asot Hayruni** (Doctor of Sciences, prof.), **Valeri Tunyan** (Doctor of Sciences, prof.), **Vanik Virabyan** (Doctor of Sciences, prof.), **Rafik Nahapetyan** (Doctor of Sciences, prof.), **Hakob Harutunyan** (Doctor of Sciences), **Hovik Grigoryan** (PhD of History, associate professor), **Mkhitar Gabrielyan** (PhD of History, associate professor), **Edgar Hovhannisyanyan** (PhD of History, associate professor).

ISSN 1829-2771

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ
СОДЕРЖАНИЕ / CONTENT

ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ
ИСТОРИЯ / HISTORY

Հովհաննես Խորիկյան, ՍԱՏՐԱՊԱԿԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԿԵՆՏՐՈՆԻ ՀԱՐՑԻ ՇՈՒՐՋ 6 Oghannes Khorikyan, K VOПРОСУ О ЦЕНТРЕ САТРАПСКОЙ АРМЕНИИ Hovhannes Khorikyan, ON THE ISSUE OF THE CENTRE OF SATRAPIC ARMENIA Արտակ Մովսիսյան, Լիաննա Կարապետյան, ԾՈՓՔԻ ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅԱՆ ԺԱՄԱՆԱԿԱԳՐԱԿԱՆ ԵՎ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԸՆԴՂՐԿՄԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԻ ՇՈՒՐՋ 14 Артак Мовсисян, Лианна Карапетян, О ПРОБЛЕМАХ ХРОНОЛОГИЧЕСКИХ И ТЕРРИТОРИАЛЬНЫХ ГРАНИЦ ЦАРСТВА СОФЕНЫ Artak Movsisyan, Lianna Karapetyan, ON THE PROBLEMS OF THE CHRONOLOGICAL AND TERRITORIAL BORDERS OF THE KINGDOM OF SOPHENE
Արգիշտի Կարդանյան, ՄԱՄԻԿՈՆՅԱՆ ՏՈՀՄԸ ՏՐԴԱՏ ՄԵԾ ԵՎ ԽՈՍՐՈՎ ԿՈՏԱԿ ԱՐՇԱԿՈՒՆԻՆԵՐԻ ՕՐՈՔ..... 24 Аргишти Варданян, РОД МАМИКОНЯНОВ ВО ВРЕМЯ ПРАВЛЕНИЯ АРШАКИДОВ ТРДАТА ВЕЛИКОГО И ХОСРОВА КОТАКА Argishti Vardanyan, THE HOUSE OF MAMIKONYANS DURING THE REIGN OF TRDAT THE GREAT AND KHOSROV KOTAK
Դմիտրի Դիմիդյուկ, ХОЛОДНОЕ ОРУЖИЕ В АРМЯНСКИХ ХРОНИКАХ ЭПОХИ БАГРАТИДОВ (КОНЕЦ IX- СЕРЕДИНА XI ВВ.): ТЕРМИНОЛОГИЯ ВОПРОСА 33 Դմիտրի Դիմիդյուկ, ՍԱՌԸ ԶԵՆՔԵՐԸ ԲԱԳՐԱՏՈՒՆՅԱՑ ԴԱՐԱՇՐՋԱՆԻ ԺԱՄԱՆԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ (IX Դ. ՎԵՐՋ-ՄԻ Դ.). ՀԱՐՑԻ ՏԵՐՄԻՆՈԼՈԳԻԱ
Dmytro Dymydyuk, BLADE WEAPONS IN THE MEDIEVAL ARMENIAN CHRONICLES OF THE BAGRATID ERA (END OF 9TH - MIDDLE OF 11TH CENTURIES): THE PROBLEM OF TERMINOLOGY
Դավիթ Թինոյան, ԿԻԼԻԿԻՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍՈՒԹՅՈՒՆԸ ՀԵԹՈՒՄ Բ-Ի ԳԱՀԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԱՌԱՋԻՆ ՇՐՋԱՆՈՒՄ 48 Давит Тиноян, АРМЯНСКИЙ КАТОЛИКОСАТ В ПЕРВОЙ ПОЛОВИНЕ ПРАВЛЕНИЯ ХЕТУМА II
Davit Tinoyan, THE ARMENIAN CATHOLICOSATE IN THE FIRST HALF OF THE RULE OF HETUM II
Դիանա Հայրապետյան, ՕՍՄԱՆՅԱՆ ՖՈՒՏՎԱԿԱԹԻ ԵՎ ԱԽԻԱԿԱՆ ՄԻԱԲԱՆՈՒԹՅԱՆ ԴԵՐԸ ՀԱՅ ԱՐՀԵՍԱՎՈՐՆԵՐԻ ԻՍԼԱՄԱՑՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՈՒՄ (XIII-XV ԴԴ.)..... 55 Диана Айрапетян, РОЛЬ ОТТОМАНСКОГО ФУТУВВАТА И АХИЙСКОГО БРАТСТВА В ИСЛАМИЗАЦИИ АРМЯНСКИХ РЕМЕСЛЕННИКОВ (XIII-XV ВЕКА)
Diana Hayrapetyan, THE ROLE OF OTTOMAN FUTUWWA AND AKHI BROTHERHOOD IN THE PROCESS OF ISLAMIZATION OF ARMENIAN CRAFTSMEN (XIII-XV CC)
Ֆելիքս Մովսիսյան, XIX Դ. ԱՐԵՎՄՏԱՀԱՅ ՆՇԱՆԱՎՈՐ ՄԱՍՈՆ ՍԵՐՈՎԲԵ ԱԶՆԱՎՈՐԸ 63 Феликс Мовсисян, ВЫДАЮЩИЙСЯ ЗАПАДНОАРМЯНСКИЙ МАСОН XIX ВЕКА СЕРОВБЕ АЗНАВУР
Felix Movsisyan, FAMOUS WESTERN ARMENIAN MASON OF THE 19TH CENTURY SEROVBE AZNAVOUR
Հովիկ Գրիգորյան, ՀՅՂ ՑՈՒՑԱԿԱՆ ՄԱՐՄՆԻ ԳՈՐԾՈՒՆԵՐՈՒԹՅՈՒՆԸ «ՆԺՈՒՅԳԻ ԳՈՐԾ»-Ի ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԱՌԱՋԻՆ ՓՈՒՆՈՒՄ (1904 Թ. ՄԵՊՏԵՄԲԵՐ - 1905 Թ. ՄԱՐՏ)..... 77 Овик Григорян, ДЕЯТЕЛЬНОСТЬ ОТВЕТСТВЕННОГО УКАЗЫВАЮЩЕГО КОНСТАНТИНОПОЛЬСКОГО ОРГАНА АРФ ДАШНАКЦУТЮН НА ПЕРВОМ ЭТАПЕ ПОДГОТОВКИ «ДЕЛА КОНЬЯ» (СЕНТЯБРЬ 1904 Г. - МАРТ 1905 Г.)

Hovik Grigoryan, THE ACTIVITY OF ARMENIAN REVOLUTIONARY FEDERATION'S (ARF-DASHNAKTSUTYUN) CONSTANTINOPLE'S INDICATIVE ORGANIZATION IN THE FIRST STAGE OF PREPARATION OF "THE CASE OF NZHUYK" (SEPTEMBER, 1904 - MARCH, 1905)	
Վանիկ Կիրաբյան, ՀԱՅԿԱԿԱՆ ԲԱՆԱԿԻ ՀԱՄԱՐ ԶԵՆՔ-ԶԻՆԱՍԹԵՐՔԻ ՀԱՅԹԱՅԹՈՒՄԸ 1918-1920 ԹԹ.....	95
Ваник Вирабян, ПОИСК ОРУЖИЯ ДЛЯ АРМЯНСКОЙ АРМИИ В 1918-1920 ГГ	
Vanik Virabyan, THE AMMUNITION PROCURANCE OF THE ARMENIAN ARMY (1918-1920)	
Հովիկ Գրիգորյան, Վահագն Հակոբյան, ՈՒՐՎԱԳԾԵՐ ԴԱԿԻԹ ԱՆԱՆՈՒՆԻ ԿՅԱՆՔԻ ԵՎ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ	108
Овик Григорян, Ваагн Акопян, ОЧЕРКИ ЖИЗНИ И ДЕЯТЕЛЬНОСТИ ДАВИДА АНАНУНА	
Hovik Grigoryan, Vahagn Hakobyan, NOTES ON DAVID ANANUN'S LIFE AND ACTIVITY	
Արամ Սիմոնյան, Ալեքսանդր Սաֆարյան, ՀԱՅԱՍՏԱՆՅԱՆ ՊԱՏՄԱԲԱՆՆԵՐԻ ԱՇԽԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ ԹՅՈՒՐՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԳԱՂԱՓԱՐԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԻՑ	129
Арам Симонян, Александр Сафарян, ИЗ ИСТОРИИ ОЦЕНКИ ИДЕОЛОГИИ ТЮРКИЗМА В ТРУДАХ ИСТОРИКОВ АРМЕНИИ	
Aram Simonyan, Safaryan Alexander, ON THE IDEOLOGY OF TÜRKÇÜLÜK IN THE WORKS OF ARMENIAN HISTORIANS	
Валерий Тунян, ФЕЙК-НЬЮС ПРОПАГАНДЫ ТУРЦИИ И АЗЕРБАЙДЖАНА	137
Վալերի Թունյան, ԹՈՒՐԻՔԱՅԻ և ԱՂԲԵՉԱՆԻ ՔԱՐՈՉՉՈՒԹՅԱՆ ԿԵՂԾ ԼՈՒՐԵՐԸ	
Valery Tunyan, FAKE NEWS OF TURKEY AND AZERBAIJAN PROPAGANDA	

ՀՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԱԶԳԱԳՐՈՒԹՅՈՒՆ
АРХЕОЛОГИЯ И ЭТНОГРАФИЯ / ARCHAEOLOGY AND ETHNOGRAPHY

Հայկ Ավետիսյան, Արսեն Բոբոխյան, Արտակ Գնունի, Լևոն Մկրտչյան, Նատալյա Ավետիսյան, ԹԱՂՄԱՆ ԾԵՍԻ ԻՐԱԿԻՃԱԿԱՅԻՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅԱՆ ՓՈՐՁ	145
Гайк Аветисян, Арсен Бобохян, Артак Гнуни, Левон Мкртчян, Наталья Аветисян, ОПЫТ СИТУАЦИОННОГО АНАЛИЗА ПОГРЕБАЛЬНОГО ОБРЯДА	
Hayk Avetisyan, Arsen Bobokhyan, Artak Gnuni, Levon Mkrтчyan, Natalya Avetisyan, THE EXPERIENCE OF SITUATIONAL ANALYSIS OF THE FUNERAL RITE	
Ռաֆիկ Նահապետյան, ՀԱՅԿԱԿԱՆ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԱՎԱՆՂԱԿԱՆ ԲՆԱԿԱՐԱՆԻ ԱԶԳԱԳՐԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ՇՈՒՐՁ	158
Рафик Напетян, ОБ ЭТНОГРАФИЧЕСКОМ ИССЛЕДОВАНИИ АРМЯНСКОГО НАРОДНОГО ТРАДИЦИОННОГО ЖИЛИЩА	
Rafik Nahapetyan, ON THE ETHNOGRAPHIC STUDY OF THE ARMENIAN NATIONAL TRADITIONAL APARTMENT	

ԱՐԿԵՍ ԵՎ ՄՇԱԿՈՒՅԹ
ИСКУССТВО И КУЛЬТУРА / ART AND CULTURE

Արթուր Հովհաննիսյան, ԽՈՐԵՆ ՏԵՐ-ՀԱՐՈՒԹՅԱՆԻ ԳՐԱՖԻԿԱՆ	166
Артур Ованнисян, ГРАФИКА ХОРЕНА ТЕР-АРУТЯНА	
Arthur Hovhannisyan, KHOREN-DER HARUTYAN'S GRAPHIC	

ՄՓՅՈՒՐՔԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ
ДИАСПОРАВЕДЕНИЕ / DIASPORA STUDIES

Էդիկ Մինասյան, Լևոն Բատիև, ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՎ ԴՈՆԻ ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ-ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՎ ՀՈԳԵՎՈՐ-ՄՇԱԿՈՒԹՅԱՆ ԿԱՊԵՐԸ 1991-2019 ԹԹ.	174
Эдик Минасян, Левон Батиев, ОТНОШЕНИЯ РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ С АРМЯНСКОЙ ОБЩИНОЙ ДОНА В ОБЩЕСТВЕННО-ПОЛИТИЧЕСКОЙ И КУЛЬТУРНОЙ СФЕРЕ В 1991-2019 гг.	

Edik Minasyan, Levon Batiev, RELATIONS OF THE 3rd REPUBLIC OF ARMENIA WITH ARMENIAN COMMUNITY OF DON IN SOCIAL-POLITICAL AND CULTURAL SPHERES IN 1991-2019	
Արման Եդիազարյան, Ալիկ Դարիբյան, Դիանա Դավթյան, Ինքնութիւնը և ՆԴԻՐՆԵՐԸ ՍՈՍԿԱԿԱՅԻ ՀԱՅ ԵՐԻՏԱՍԱՐԴՈՒԹՅԱՆ ՇՐՋԱՆՈՒՄ	191
Arman Yeghiazaryan, Alik Gharibyan, Dianna Davtyan, ПРОБЛЕМЫ ИДЕНТИЧНОСТИ АРМЯНСКОЙ МОЛОДЕЖИ МОСКВЫ	
Arman Yeghiazaryan, Alik Gharibyan, Dianna Davtyan, ISSUES OF IDENTITY OF MOSCOW ARMENIAN YOUTH	
Հովհաննես Ալեքսանյան, ՀԱՅԱԶԳԻ ԿՈՒՍԱԿՑԱԿԱՆ-ՊԵՏԱԿԱՆ ԳՈՐԾԻՉՆԵՐԸ ՄԻՋԻՆ ԱՍԻԱՅԻ ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ	200
Ovannes Aleksanyan, АРМЯНЕ-ПАРТИЙНО-ГОСУДАРСТВЕННЫЕ ДЕЯТЕЛИ В СОВЕТСКИХ РЕСПУБЛИКАХ СРЕДНЕЙ АЗИИ	
Hovhannes Aleksanyan, ARMENIANS-PARTY-STATE LEADERS IN THE SOVIET REPUBLICS OF CENTRAL ASIA	

ԲՆԱԳՐԻ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ
ИЗДАНИЕ РУКОПИСЕЙ / PUBLICATION OF MANUSCRIPTS

Հայկազ Հովհաննիսյան, ԱԶԳԱՅԻՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՍՏԵՓԱՆՈՍ ՆԱԶԱՐՅԱՆՑԻ ՏԵՍԱԿԱՆԸ	206
Айказ Оганесян, ВИДЕНИЕ НАЦИОНАЛЬНОГО ОБРАЗОВАНИЯ СТЕПАНОСА НАЗАРЯНЦА	
Haikaz Hovhannisyanyan. VISION OF STEPANOS NAZARYANTS ABOUT NATIONAL EDUCATION	

ՈՒՍՈՒՄՆԱՍԵԹՈՂԱԿԱՆ
УЧЕБНО-МЕТОДИЧЕСКИЙ / EDUCATIONAL-METHODOLOGICAL

Լևոն Հովսեփյան, ԹՈՒՐՔԻԱՅԻ ԱՆՎՏԱՆԳԱՅԻՆ ԵՎ ՊԱՇՏՊԱՆԱԿԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԴԱՍԱԿԱՆԴՄԱՆ ԱՌԱՆՋՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ ՈՒ ՍԵԹՈՂԱԿԱՆ ՈՒՂԵՆԻՇՆԵՐԸ	214
Levon Hovsepnyan, ОСОБЕННОСТИ И МЕТОДОЛОГИЧЕСКИЕ ПОДХОДЫ К ОБУЧЕНИЮ ПОЛИТИКИ В СФЕРЕ БЕЗОПАСНОСТИ И ОБОРОНЫ ТУРЦИИ	
Levon Hovsepnyan, THE SPECIFICS AND METHODOLOGY OF TEACHING TURKEY'S SECURITY AND DEFENSE POLICY	

ԳՐԱՆՈՍՈՒԹՅՈՒՆ
РЕЦЕНЗИЯ / REVIEW

Փայլակ Ենգոյան, Էդիկ Մինասյան, «Երևանի պետական համալսարանն ու համալսարանականները Հայրենական մեծ պատերազմի տարիներին (1941-1945 թթ.)», Եր., ԵՊՀ հրատ., 2019, 586 էջ + 48 ներդիր:	222
ՄԵՐ ԵՐԱՆՏԱԿՈՐՆԵՐԸ	224
ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՀԵՂԻՆԱԿՆԵՐԻ ՄԱՍԻՆ	226
INFORMATION ABOUT THE AUTHORS	228
Ի ԳԻՏՈՒԹՅՈՒՆ ՀԵՂԻՆԱԿՆԵՐԻ	230
NOTICE FOR THE AUTHORS	

Հովհաննես Ալեքսանյան

ՀԱՅԱՋԳԻ ԿՈՒՍԱԿՑԱԿԱՆ-ՊԵՏԱԿԱՆ ԳՈՐԾԻՉՆԵՐԸ ՄԻՋԻՆ ԱՍԻԱՅԻ ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ

Բանալի բառեր. հայեր, Միջին Ասիա, կոմունիստական կուսակցություն, կառավարություն, կուսակցական պետական գործիչներ, խորհրդային հանրապետություններ, նախարար:

Միջին Ասիան ռուսական նվաճումից հետո մինչև 1924 թ. հոկտեմբերը, որպես առանձին վարչատարածքային միավոր, հայտնի է եղել Ռուսական Թուրքեստան, Թուրքեստանի գեներալ-նահանգապետություն, Թուրքեստանի երկրամաս և Թուրքեստանի ԻՍՍՀ անուններով: 1924-1936 թթ. տարածաշրջանում իրականացվել է ազգային-պետական կազմավորման գործընթաց, որն ավարտվել է Միջին Ասիայում ազգային (էթնիկ) սահմաններով միութենական 5 հանրապետությունների ստեղծմամբ:

Տարածաշրջանում հայերը սկսել են վերաբնակվել մինչև խորհրդային իշխանության հաստատումը՝ տնտեսության տարբեր ճյուղերում զբաղեցնելով առաջատար դիրքեր:

1989 թ. համամիութենական վերջին մարդահամարի տվյալներով Միջին Ասիայի խորհրդային հանրապետություններում բնակվող հայության ընդհանուր թվաքանակը կազմում էր 111.111 մարդ, որից Ուզբեկական ԽՍՀ-ում՝ 50.537 (ԽՍՀՄ հայության 1,1 տոկոսը), Թուրքմենական ԽՍՀ-ում՝ 31.829 (ԽՍՀՄ հայության 0,7 տոկոսը), Ղազախական ԽՍՀ-ում՝ 19.119 (ԽՍՀՄ հայության 0,4 տոկոսը), Տաջիկական ԽՍՀ-ում՝ 5.651 և Կիրգիզական ԽՍՀ-ում՝ 3.975 մարդ¹:

Փաստորեն, խորհրդային տարիներին Միջին Ասիայի միութենական հանրապետությունների հայ ազգաբնակչության թվաքանակը եռապատկվել է: Հայության թվաքանակը ավելացել էր բնական աճի և տեղաշարժերի հաշվին՝ նախ Ղրիմից, Հյուսիսային Կովկասից աքսորված ու այստեղ բնակություն հաստատած հազարավոր հայերի, Ղազախստանի խոպան հողերի յուրացման² քաղաքականության արդյունքում բնակություն տեղափոխված հարյուրավոր հայ մասնագետների և աշխատողների, ինչպես նաև՝ պայմանավորված հայության միջհանրապետական տեղաշարժերով, գլխավորապես, Ադրբեջանական ԽՍՀ-ից վերաբնակչության արդյունքում: Բավական է նշել, որ միայն 1970-1984 թթ. ընթացքում միջինասիական հանրապետություններ բնակչության են տեղափոխվել շուրջ 12 հազար հայեր, այդ թվում Ղազախստան՝ 4,5 հազար, Ուզբեկստան՝ 4 հազար, Թուրքմենիա՝ 2 հազար, Տաջիկստան՝ 0,8 հազար, Կիրգիզիա՝ 0,5 հազար մարդ³:

Միջին Ասիայի հայության դերակատարությունը ծանրակշիռ է եղել այդ հանրապետությունների հասարակական-քաղաքական, սոցիալ-տնտեսական, գիտական և մշակութային կյանքի տարբեր ասպարեզներում⁴, ուստի պատահական չէ, որ այս հանրապետություններում իրենց գործունեությամբ մեծ հետք և բարի համբավ են թողել բազմաթիվ հայազգի կուսակցական և պետական գործիչներ: Այդ հանրապետությունների կուսակցական և պետական կյանքում պատասխանատու պաշտոններ են զբաղեցրել և համապատասխան ոլորտներում նշանակալի ձեռքբերումներ են ունեցել տասնյակ հայազգի գործիչներ⁵:

* Հոդվածը ներկայացվել է 21.11.2019 թ., գրախոսվել է 03.12.2019 թ., ընդունվել է տպագրության 20.12.2019 թ.:

¹ Տե՛ս Ալեքսանյան Հ., Հայ ազգաբնակչությունը միութենական հանրապետություններում ըստ 1959-1989 թթ. մարդահամարների տվյալների, «Սփյուռքագիտություն» տարեգիրք, Ե., 2013, էջ 44-55:

² Տե՛ս Գալստյան Մ., Արտագնացությունը Հայաստանում (XIX դարի երկրորդ կես - XX դարի 80-ական թթ.), «Հայ ազգագրություն և բանահյուսություն». նյութեր և ուսումնասիրություններ, պր. 26, Ե., 2009, էջ 26, 73:

³ Տե՛ս Գրիգորյան Մ., Միգրացիոն պրոցեսները Հայաստանում (1960-1980թթ.), «Լրաբեր հասարակական գիտությունների», Ե., 1991, № 5 (581), էջ 49:

⁴ Տե՛ս «Հայոց պատմություն», հ. 4, գ. II, «Նորագույն ժամանակաշրջան (1945-1991թթ.)», Խմբ. խորհուրդ՝ Վ. Բարխուդարյան և ուրիշ.: Ե., 2016, էջ 251-259; Мы всегда были вместе, Коммунист, N 99 (16986), Е., 5 мая 1990 года, с. 2.

⁵ Տե՛ս Ալեքսանյան Հ., Հայկական համայնքները խորհրդային հանրապետություններում 1941-1991 թթ., Ե., 2016, էջ 46-49; Григорянц А. А., Армяне в Средней Азии (вторая половина XIX в. -1917 г.), Е., 1984, с. 134-136.

Այսպես, դեռևս 1920-ական թթ. Միջին Ասիա է գործուղվել ՌԽՖՍՀ տարբեր տարածաշրջաններում և ԽՍՀՄ կուսակցական ու պետական մարմիններում աշխատանքի հսկայական փորձ ու ճանաչում ունեցող Մուշեղ Տեր-Եղիազարյանը (Տեր Եղիազարյան Միխայիլ Անդրեևիչ): Մոսկվայում, Օրյոլում, Նիժնի Նովգորոդում, Ուրալում պատասխանատու օղակներ ղեկավարած գործչին վստահվեցին Միջինասիական տնտեսական խորհրդի նախագահի և Միջին Ասիայի Կենտգործկոմի անդամի պաշտոնները: Այնուհետև ՌԽՖՍՀ ժողկոմխորհի որոշումով նա նշանակվեց ՌԽՖՍՀ ժողկոմխորհին կից Սենիթեչենսկի (Թուրքսիբ) երկաթուղու կառուցման աջակցության կոմիտեի անդամ (1926-1929 թթ.): Տեր-Եղիազարյանը կարևոր ներդրում է ունեցել Միջին Ասիայի տնտեսության ու մշակույթի զարգացման գործում, ոլորտի կադրային բազա ստեղծելու և այդ տարիներին ԽՍՀՄ համար պետական խնդիր հանդիսացող բամբակի մշակման ոլորտում անկախություն ապահովելու գործում¹:

1920-1930-ական թթ. Ղազախստանում պետական ու կուսակցական բարձր պաշտոններ է զբաղվել Լ. Աթայանցը, ով եղել է Ղազախստանի Պետպլանի նախագահի տեղակալ, ՌԽՖՍՀ Գերագույն դատարանի ղազախական մասնաճյուղի նախագահի տեղակալ, Կենտգործկոմի պատասխանատու աշխատակից:

Ղազախական ԽՍՀ անվանի հայ գործիչների թվում է 1933-1938 թթ. Ղազախական երկրկոմի, ապա Ղազախական ԽՍՀ Կոմկուսի Կենտկոմի առաջին քարտուղար Լևոն Միրզոյանը², ով եկավ փոխարինելու 1925 թվականից Ղազախստանը ղեկավարող Ֆ. Գոլոշչոկինին: Վերջինս կառավարման տարիներին հանրապետությունը անցել էր տարատեսակ արհավիրքների միջով, որոնք, ընդհանուր առմամբ, անվանում են նաև «փոքր հոկտեմբեր»: Միրզոյանի հետ Ղազախստանի պետական կառավարման տարբեր օղակներում հայտնվում են բազմաթիվ հայազգի գործիչներ: Լ. Միրզոյանն ու կինը՝ 1933-1937 թթ. Ղազախստանի Մարքսիզմ-Լենինիզմի ինստիտուտի տնօրեն Յուլյա Թևոյանը, դարձել են ստալինյան բռնաճնշման զոհը: Լ. Միրզոյանի օրոք Ղազախստանը հաղթահարել է տնտեսական դժվարությունները, մշակութային ու գիտական առաջընթաց արձանագրել, ուստի պատահական չէ, որ Ղազախ ժողովուրդը նրան կնքել է «Միրզա ջան» (բարի հոգի) անունով³: 1938 թ. որակվելով «ժողովրդի թշնամի»՝ Լ. Միրզոյանը հեռացվել է իշխանությունից, ապա դարձել ամբողջատիրական համակարգի բռնության զոհ, իսկ նրա անունը կրող Միրզոյան քաղաքն ու համանուն շրջանը վերանվանվել են Ջամբուլ անունով⁴:

Հետպատերազմյան տասնամյակներին Ղազախստանում առանցքային պաշտոններ են զբաղեցրել Ս. Խաչատուրովը (Ղազախստանի Պետպլանի նախագահի տեղակալ, իսկ 1962-1966 թթ.՝ կառավարության նախագահի տեղակալ), Ա. Վարդանյանը (Ղազախստանի գունավոր մետալուրգիայի մինիստրի տեղակալ, 1966-1975 թթ.՝ Ղազախական ԽՍՀ կառավարության նախագահի առաջին տեղակալ), Էրիկ Ղուկասովը (1978-1992 թթ.՝ Ղազախստանի կառավարության ղեկավարի տեղակալ, ապա Ղազախստանի հանրապետության փոխվարչապետ), Ե. Եփևով-Բաբախանովը (Մոնտաժային և հատուկ շինարարական աշխատանքների գծով մինիստր, իսկ 1990-1993 թթ.՝ Ղազախստանի կառավարության ղեկավարի տեղակալ, փոխվարչապետ)⁵:

Ղազախստանի ԽՍՀ գործադիր իշխանության մեջ երկարամյա աշխատանք են տարել Կապի մինիստրի տեղակալ Գ. Առաքելովը, Ավտոճանապարհների մինիստրի առաջին տեղակալ Ս. Տեր-Վարդանովը:

1940-ական թթ. Թուրքմենական ԽՍՀ կառավարության ղեկավարի տեղակալ էր Լ. Սևյանցը, իսկ Ա. Սահակյանը Պետպլանի նախագահն էր: 1953-1961 թթ. «Թուրքմեննավթ» միավորումը զլխավորել է Պ. Մռավյանը: Թուրքմենական ԽՍՀ-ում անվանի երկրաբան էր ա-

¹ Տե՛ս «Ноев ковчег», М., № 10 (297) октябрь 2017.

Տե՛ս <https://noev-kovcheg.ru/mag/2017-10/5957.html>.

² Տե՛ս «Левон Мирзоян в Казахстане»: сборник документов и материалов (1933-1938 гг.), Отв. редактор Л. Д. Дегитаева, Архив Президента Республики Казахстан, Алматы, 2001, с. 4-12.

³ Տե՛ս Морякова М., Деятельность и вклад Л. И. Мирзояна в развитии Казахстана, «Շիրակի պատմամշակութային ժառանգությունը. հայագիտության արդի հիմնահարցեր», 10-րդ միջազգային գիտաժողովի նյութեր (Գյումրի, 27-29 սեպտեմբեր, 2019 թ.), Ե., 2019, էջ 173-178:

⁴ Տե՛ս Шилдебат Сабит, Армяне в системе государственной власти Казахстана, «Թուրքագիտական և օսմանագիտական հետազոտություններ», VII, Ե., 2011, էջ 68-69:

⁵ Տե՛ս “Всемирный армянский атлас”, М., 2015, с. 163.

կադեմիկոս Գ. Գաբրիելյանցը՝ տասնյակ տարիներ ղեկավարելով երկրաբանական հետազոտությունները նավթագազային պաշարների հայտնագործման ուղղությամբ: Գ. Գաբրիելյանցը երկար տարիներ Թուրքմենական ԽՍՀ կառավարությանը կից Երկրաբանության և ընդերքի պահպանության վարչության գլխավոր երկրաբանն էր, 1989-1991 թթ.՝ ԽՍՀՄ Երկրաբանության մինիստրը¹: Հայրենադարձվելով և վերջին տարիներին բնակություն հաստատելով Արցախում՝ Գ. Գաբրիելյանցն իր գիտելիքներն ու կարողությունները ծառայեցնում է ԼՂՀ ընդերքի հարստությունների լայնածավալ ուսումնասիրման և տնտեսության զարգացման խնդիրների լուծմանը²:

Կիրգիզական ԽՍՀ փոքրաթիվ հայ համայնքը և այստեղ գործուղված, ապա հաստատված հայ մասնագետները ևս նկատելի դերակատարություն են ունեցել հանրապետության կյանքի տարբեր ասպարեզներում: Նրանց շարքում իրենց երկարամյա աշխատանքային գործունեությամբ աչքի են ընկել Գեորգի Բադրամովը, ով հաջորդաբար աշխատել է հանրապետության Տեքստիլ արդյունաբերության ժողկոմի տեղակալ, Հողագործության ժողկոմի տեղակալ, Կիրգիզիայի Կոմկուսի ԿԿ-ի գյուղատնտեսության բաժնի վարիչ, իսկ 1947-1953 թթ.՝ Կիրգիզիայի ԽՍՀ Գյուղատնտեսության մինիստր³: Վլադիմիր Պետրոսյանցը⁴ 1963-1979 թթ. Կիրգիզիայի ԽՍՀ Առողջապահության մինիստր:

1930-ական թթ. վերջին Հայկական ԽՍՀ Պետալանի նախագահի տեղակալ Գուրգեն Ջարիֆյանը⁵ 1940 թ. նշանակվել է Կիրգիզիայի Սպառողական Միության նախագահի տեղակալ, 1947-1950 թթ.՝ աշխատել է Կիրգիզիայի Առևտրի մինիստրի տեղակալ, ապա՝ Ֆրունզեի մարզային Սպառողական Միության նախագահ, Ղազախստանի Ջամբուլի մարզի Սպառողական Միության նախագահի տեղակալ: Ալբերտ Արդիյանցը⁶ զբաղեցրել է հանրապետության էներգետիկայի մինիստրի տեղակալի, Կիրգիզէներգոյի պետի տեղակալի, Տուրիզմի Հանրապետական Խորհրդի գլխավոր տնօրենի տեղակալի պաշտոնները և այլք⁷:

Ուզբեկական ԽՍՀ-ում կուսակցական ու պետական գործունեության փայլուն ուղի են անցել Հ. Սահակովը (Ֆերգանայի մարզխորհրդի նախագահ, կառավարությանը կից ներգաղթյալների հատուկ բաժնի պետ), Հ. Գաբրիելյանցը (1965-1972 թթ. Ուզբեկական ԽՍՀ կառավարության նախագահի տեղակալ), Գ. Սարկիսովը (Տաշքենտի քաղաքային նախագահի տեղակալ) և այլք:

Տաջիկական ԽՍՀ-ում նույնպես ակնառու էր հայ անվանի գործիչների ներդրումը հանրապետության կյանքի տարբեր ոլորտներում: Հանրապետությունում ամենաբարձր պաշտոնը զբաղեցրած հայազգի գործիչը 1935-1937 թթ. Տաջիկական ԽՍՀ Կոմկուսի Կենտկոմի առաջին քարտուղար, ստալինյան բռնությունների զոհ Սուրեն Շադունցն էր⁸:

¹ 1965-1989 թթ. վարել է Համամիութենական նավթային երկրաբանահետախուզական գիտահետազոտական ինստիտուտի բաժնի վարիչի, ապա «Սոյուզգեոֆիզիկա» և «Նեֆտեգեոֆիզիկա» միավորումների գլխավոր տնօրենի տեղակալի պաշտոնները, իսկ 1987-1989 թթ. եղել է վերը նշված գիտահետազոտական ինստիտուտի տնօրեն: ԽՍՀՄ կազմալուծումից հետո՝ 1992-2011 թթ. գլխավորել է «Գեոսերվիս» միջազգային գիտատեխնիկական-խորհրդատվական ընկերությունը: Գ. Գաբրիելյանցի գործունեության զգալի մի հատված նվիրված է եղել նաև լայնածավալ խորհրդատվական գործունեությանը՝ կապված տասնյակից ավելի երկրներում (Հնդկաստան, Կուբա, Չինաստան, Լեհաստան, Եթովպիա և այլն), իրականացվող նավթի և գազի որոնողական-հետախուզական աշխատանքների կազմակերպման խնդիրների հետ: Գ. Գաբրիելյանցի անմիջական նախաձեռնությամբ և աջակցությամբ Մոսկվայում հրատարակվել է «Առագաստ» ժողովածուն, Պյատիգորսկում կառուցվել է Սուրբ Սարգիս եկեղեցին: 2011 թ. նրա աջակցությամբ և մասնակցությամբ, ՀՀ ԳԱԱ Երկրաբանական գիտությունների ինստիտուտի մի խումբ գիտնականների ուժերով կազմվել է հրատարակվել է «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության երկրաբանությունը և հանքային պաշարները» արժեքավոր աշխատությունը (ռուսերեն լեզվով), Շուշի քաղաքում հիմնել է երկրաբանության պետական թանգարան:

² Տե՛ս ՀՀ ԳԱԱ «Տեղեկագիր» (Գիտություններ Երկրի մասին), Ե., 2014, 67, № 1, էջ 69-71:

³ Տե՛ս «Армяне в Кыргызстане», Бишкек, 1999, с 122.

⁴ Վ. Պետրոսյանցը ծնվել է 1922 թ. Ուզբեկստանի Կոկանդ քաղաքում:

⁵ Գ. Ջարիֆյանը ծնվել է 1905 թ. Ալեքսանդրապոլի գավառի Հոռոմ գյուղում:

⁶ Ա.Արդիյանցը ծնվել է 1935 թ. Ուզբեկստանի Կարշի քաղաքում:

⁷ Տե՛ս Григорий Балян, Генрих Балян, Армяне Кыргызстана и мира..., Бишкек, 2018, с. 24-27.

⁸ Ս. Շադունցը ծնվել է 1898 թ. Ելիզավետպոլի նահանգի Ջեբրայիլ գյուղում, 1930-ական թթ. գործուղվել է Միջին Ասիա: 1931-1932 թթ. եղել է Միջին Ասիայի Բամբակմիավորման նախագահը, 1932-1934 թթ.՝ ՀամԿ(Բ)Կ Միջինասիական բյուրոյի քարտուղարը: 1937 թ. նոյեմբերին ձերբակալվել է, ապա ԽՍՀՄ Գերագույն Դատա-

Հետպատերազմյան տարիներին՝ 1947-1950 թթ., Տաջիկական ԽՍՀ Կազանովիչաբադի շրջկոմի առաջին քարտուղար, 1950-1952 թթ.՝ Լենինաբադի մարզկոմի քարտուղար, 1952-1956 թթ.՝ Գյուղատնտեսության մինիստրի տեղակալ, 1962-1965 թթ.՝ Արտադրության և գյուղատնտեսական ապրանքների պահեստավորման մինիստր, իսկ 1960-1970-ական թթ. Մինիստրների Խորհրդի նախագահի տեղակալն էր Հ. Միրզայանցը¹: 1946-1948 թթ. Տաջիկական ԽՍՀ Ներքին գործերի մինիստրի տեղակալն էր Գ. Միքայելյանը: Հանրապետության Շաարտուզի շրջկոմի առաջին քարտուղարի, իսկ 1968-1978 թթ. Տաջիկական ԽՍՀ Կոմկուսի Կենտկոմի գործերի կառավարչի տեղակալի պաշտոնն է զբաղեցրել Ս. Հարությունովը:

Բեղուն աշխատանքային ուղի է անցել Սամարղանդում ծնված Էդուարդ Միկիրտիչևը, ով Տաջիկական ԽՍՀ տարբեր շրջաններում զբաղեցրել է շրջկոմի առաջին քարտուղարի պաշտոնը, իսկ 1982-1985 թթ.՝ եղել է հանրապետության Շինարարության մինիստրը:

ԽՍՀՄ-ում «վերակառուցման» քաղաքականության ծախսողմամբ, ազգային շարժումների ուժեղացմամբ, ազգամիջյան բախումներով, սոցիալ-տնտեսական վիճակի վատթարացմամբ և այլ պատճառներով պայմանավորված միջինասիական հանրապետություններից տեղի ունեցավ հայության նկատելի արտահոսք, նրանց մի մասը հայրենադարձվեց Հայաստանի Հանրապետություն:

Միջին Ասիայի խորհրդային հանրապետություններում հարյուրավոր անվանի հայ մտավորականների, գիտնականների, տնտեսության ու մշակույթի գործիչների անխոնջ ջանքերով նույնպես տարածաշրջանի հայությունը վաստակել է բարի համբավ ու ճանաչում: Այդուհանդերձ, մշտապես կարևոր և արդիական է վեր հանել հայության կարևոր դերակատարությունը տարածաշրջանի առաջընթացի գործում, քանի որ ինչպես խորհրդային տարիներին (Աշխաբադի, Ղուշանբեթի դեպքերը), այնպես էլ հետխորհրդային շրջանում (Կարազանդայի դեպքերը 2019 թ. հունվարին) երբեմն-երբեմն հնչում են հակահայ կոչեր, տեղ են գտնում հակահայ գործողություններ, որոնք մեծ վտանգ կարող են պարունակել թյուրքալեզու հանրապետությունների հայ համայնքների հետագա գոյության համար:

Առաջին պլան բերելով Միջին Ասիայի հայազգի պետական ու կուսակցական գործիչների նվիրումն իրենց գործին, նրանց ղեկավարման շրջանում գրանցված շոշափելի արդյունքները և բարի համբավը՝ արժանին ենք մատուցում վերջիններիս հիշատակին ու գործին:

Միևնույն ժամանակ, Հայաստանին ու միջինասիական հանրապետություններին միավորում են երկկողմ ու բազմակողմ հարաբերությունների այնպիսի կառույցներում, ինչպիսիք են ԱՊՀ-ն, ԵԱՏՄ-ն և ՀԱՊԿ, ուստի լրացուցիչ կարևորություն են ստանում միասնական անցյալի համատեղ ձեռքբերումների բացահայտումն ու ներկայացումը:

Ованнес Алексанян, АРМЯНЕ-ПАРТИЙНО-ГОСУДАРСТВЕННЫЕ ДЕЯТЕЛИ В СОВЕТСКИХ РЕСПУБЛИКАХ СРЕДНЕЙ АЗИИ. По данным Всесоюзной переписи населения 1989 года в советских республиках Средней Азии проживало 111.111 армян, из которых - 50 537 в Узбекской ССР (1,1 % армян в СССР), 31 829 - в Туркменской ССР (0,7 % армян в СССР), 19.119- в Казахской ССР (0,4 % армян в СССР), 5.651- в Таджикской ССР и 3.975- в Киргизской ССР.

Количество армян в регионе увеличилось за счет естественного прироста, в результате политики депортации армян из Крыма и Северного Кавказа, а также сотен армянских специалистов и рабочих переехавших сюда для освоения целинных земель и т.д.

Роль армян была значительной в сферах общественно-политической, социально-экономической, научной и культурной жизни республик Средней Азии. Не случайно многие армянские партийные и государственные деятели оставили в этих республиках добрую память, занимали ответственные посты в партийных и государственных структурах, до-

րանի ռազմական կոլլեգիայի կողմից մեղադրվել է հակահեղափոխական գործունեության մեջ և դատապարտվել մահապատժի:

¹ Հայկո Միրզայանցը ծնվել է Ուզբեկստանի Կոկանդ քաղաքում 1914 թ.: 1956-1961 թթ. եղել է Տաջիկական ԽՍՀ Կոմկուսի ԿԿ գյուղբաժնի վարիչ, 1961-1962 թթ. և 1965-1975 թթ. Տաջիկական ԽՍՀ Մինիստրների Խորհրդի նախագահի տեղակալ: Ընտրվել է Տաջիկական ԽՍՀ Գերագույն Խորհրդի պատգամավոր: Տե՛ս <https://centrasia.org/person2.php?st=1371724673>

бились значительных успехов в соответствующих областях своей деятельности. Так, среди известных армянских деятелей Казахской ССР были Левон Мирзоян (Первый секретарь Казкрайкома партии и ЦК Коммунистической партии Казахстана в 1933-1938 гг. Вместе с женой - директором Института Марксизма-Ленинизма Казахстана Юлией Тевосян стали жертвами сталинских репрессий), С. Хачатуров (заместитель Председателя Госплана Казахской ССР, заместитель Председателя Правительства в 1962-1966 гг.), А. Варданян (заместитель министра цветной металлургии, первый заместитель Председателя правительства Казахской ССР в 1966-1975 годах), Эрик Гукасов (заместитель Главы Правительства Казахской ССР, а затем вице-премьер Республики Казахстан в 1978-1992 годах), Е. Ежиков-Бабаханов (министр по Сборке и Специальному строительству, в 1990-1993 годах заместитель Главы Правительства, а затем заместитель Премьер-министра Республики Казахстан) и другие.

1940-ые годы заместителем председателя Правительства Туркменской ССР работал Л. Севянц, а Председателем Госплана - А. Саакян. С 1953 по 1961 год Союз "Туркменнефть" возглавлял П. Мравян. Выдающимся геологом в Туркменской ССР был академик Григорий Габриелянц, кто в течение десятков лет исследовал запасы нефти и газа республики. Г. Габриелянц был главным геологом Департамента геологии и охраны окружающей среды при Правительстве Туркменской ССР, а в 1989-1991 годах возглавлял министерство Геологии СССР.

Армяне сыграли заметную роль в различных сферах жизни Киргизской ССР: из них стоит упомянуть имена Георгия Баграмова (министр Сельского хозяйства Киргизской ССР в 1947-1953 гг.), Владимира Петросянца (министр Здравоохранения Киргизской ССР в 1963-1979 гг.) и Гургена Зарифяна (заместитель министра Торговли Киргизской ССР в 1947-1950 гг.). В партийной и государственной службе Узбекской ССР своей деятельностью отличились А. Сааков (Председатель Ферганского областного совета, начальник специального отдела правительства по вопросам иммигрантов), Гайк Габриелянц (заместитель Главы Правительства Узбекской ССР в 1965-1972 гг.), Г. Саркисов (заместитель председателя Ташкентской городской администрации) и другие.

На руководящих должностях в Таджикской ССР работали С. Шадунц (Первый секретарь ЦК Компартии Таджикской ССР в 1935-1937 гг.), Х. Мирзоянц (заместитель Председателя Совмина Таджикской ССР в 1961-1962 гг., 1965-1975 гг.), Э. Мыкиртичев (министр Строительства Таджикской ССР в 1982-1985 гг.) и другие.

Ключевые слова: армяне, Средняя Азия, Компартия, правительство, партийно-государственные деятели, советские республики, министр.

Hovhannes Aleksanyan, ARMENIANS-PARTY-STATE LEADERS IN THE SOVIET REPUBLICS OF CENTRAL ASIA. According to the 1989 All-Union (Soviet Union) population census, 111,111 Armenians lived in the Soviet republics of Central Asia, of which 50,537 in the Uzbek SSR (1.1% of Armenians in the USSR), 31,829 in the Turkmen SSR (0.7% of Armenians in the USSR), 19,119 in the Kazakh SSR (0.4% of Armenians in the USSR), 5,651 in the Tajik SSR and 3,975 in the Kirghiz SSR.

The number of Armenians in the region increased due to natural growth, as a result of the policy of deportation of Armenians from the Crimea and the North Caucasus, as well as hundreds of Armenian specialists and workers who moved here to develop Virgin lands (Tselina), etc.

The role of Armenians was significant in the areas of socio-political, socio-economic, scientific and cultural life of the republics of Central Asia. It is not by chance that many Armenians - party and state leaders left a good memory in these republics, occupied responsible posts in party and state structures, and achieved significant success in their respective areas of activity. Thus, among the well-known Armenian figures of the Kazakh SSR were Levon Mirzoyan (The First secretary of the Kazkraykom party and the Central Committee of the Communist Party of Kazakhstan in 1933-1938. He and his wife Yulia Tevosyan, director of the Marxism-Leninism

Institute of Kazakhstan, became victims of Stalinist repression), S. Khachaturov (Vice-Chairman of State Planning Committee-Gosplan of the Kazakh SSR, Vice-Chairman of the Government in 1962-1966), A. Vardanyan (Deputy Minister of the Non-Ferrous Metallurgy, First Deputy Chairman of the Government of the Kazakh SSR in 1966-1975), Eric Gukasov (Deputy Head of Government of the Kazakh SSR, and then Deputy Prime Minister of the Republic of Kazakhstan in 1978-1992), E. Ezhikov-Babakhanov (Minister for Assembling and Special Construction, Deputy Head of Government and then Deputy Prime Minister of the Republic of Kazakhstan in 1990-1993) and others.

In 1940s the key positions in the Turkmen SSR were occupied by the Deputy Chairman of the Government L. Sevyants and the Chairman of the State Planning Committee A. Sahakyan.

From 1953 to 1961, the “Turkmenneft Union” was headed by P. Mravyan. An outstanding geologist in the Turkmen SSR was academician Grigory Gabrielyants. He has been researching the republic’s oil and gas reserves for decades. G. Gabrielyants was the chief geologist of the Department of Geology and Environmental Protection under the Government of the Turkmen SSR, and in 1989-1991 headed the Ministry of Geology of the USSR.

Armenians played a prominent role in various spheres of life of the Kyrgyz SSR. It is worth mentioning the names of Georgi Bagramov (Minister of Agriculture of the Kyrgyz SSR in 1947-1953), Vladimir Petrosyants (Minister of Health of the Kirghiz SSR in 1963-1979) and Gurgun Zarifyan (Deputy Minister of Trade of the Kirghiz SSR in 1947-1950).

A. Sahakov (Chairman of the Fergana Regional Council, Head of the Immigrant Special Section of the Government), Hayk Gabrielyants (Deputy Head of the Government of the Uzbek SSR in 1965-1972), G. Sarkisov (Deputy Chairman Tashkent city administration) and others distinguished themselves by their activity in the party and state service of the Uzbek SSR

In leading positions in the Tajik SSR worked S. Shadunts (The First secretary of the Central Committee of the Communist Party of the Tajik SSR in 1935-1937), H. Mirzoyants (Deputy Chairman of the Council of Ministers of the Tajik SSR in 1961-1962, 1965-1975), E. Mikirtichev (Minister of Construction of the Tajik SSR in 1982-1985) and others.

Key words: Armenians, Central Asia, Communist Party, government, party-state leaders, soviet republics, minister.